

Արդէն երկու խմբի համեմատութիւնից պարզ երևում է, որ եղծուածները կատարուել են Հայոց և Աղուանից աթոռաների գահական իրաւունքների վերաբերեալ կետերում իսկ թէ երբ է կատարուել այս եղծումը, այս մասին մի քանի խօսք:—ինչպէս տեսանք Աղուանից պատմութեան՝ մինչև ցայսօր յայտնի, օրինակների մէջ հնագոյնն է երկաթագիր օրինակը, զուտած Հայոց ԶԼՀ=1289 փրկչական թուականին, կարբու ս. Յովհաննու վանքում: Այս օրինակը ՌԾՒԾ=1676 թուականին նորոգուել է Զաքարիա սարկաւագ պատմագրի ձեռքով: Երկաթագիր պակաս թերթերի տեղ Զաքարիան լուսցրել է բոլորագիր զուտթեամբ: Զաքարիայի ձեռքով նորոգած թերթերը (ձեռագիր 351, 352, 362, 374—377) համապատասխանում են Պարիզի տպագրութեան Հատոր I, երես 413—424, Հատոր II երես 29—33 և 63—76, և Մոսկվայի տպ. 219-22, 246-249 և 269-278 երեսներին: Մեր բերած հատուածներից 1 և II-ը երկաթագիր 236ա և 359թ երեսներումն են գանուում: իսկ III-ը գանուում է Զաքարիայի նորոգած բոլորագիր 375թ երեսում: Ուրեմն քերուել է ոչ միայն երկաթագիրը, այլ և Զաքարիայի բոլորագիր նորոգութիւնը, հետեւաբար եղծումը կատարուել է 1676 թուականից, այն է Զաքարիայի նորոգութիւնից յետոյ: Այս ևս ապացուցուում է, որ առաջին խմբի եղծուածների նախկին խմբագրութիւնը ըստ ամենայնի նման է երկրորդ խմբի աւանդին: մեծաւ մասամբ խոշորացուցով կարելի է վերականգնել նախնականը: Բայց ում ձեռքով է կատարուել՝ այս մասին այսչափ:—Հայոց ԽՄԾ=1761 թուականին¹ Յակոբ Շամախեցի կաթուղիկոսը խիստ փափագանօք որոնում է մի ընափառ օրինակ Աղ. Պատմութիւն ձեռք բերելու, որպէս զի ընդօրինակել տայիւր յիշատակի համար: Յայտնուում է որ կարբու Յովհաննու վանքում մասին մի ընափառ օրինակը Աղ. Պատմութիւն ձեռք բերելու, որպէս զի ընդօրինակել տայիւր յիշատակի համար: Յայտնուում է որ կարբու Յովհաննու վանքում մասին մի ընափառ օրինակը յիշեալ պատմութեան: Կաթուղիկոսի հրա-

մանովրերուումէ այն Էջմիածին և յանձնուում է Ղունկիանոս գալիքին ընդօրինակելիս զանազան սրբագրութիւններ է արել երբեմն մի բան աւելցնելով: Երբեմն էլ գուրս ձգելով՝ պակասեցնելով: Ղունկիանոսի այս սովորութեան մասին ապացոյցներ շատ ունինք ձեռքի տակ: թէ Աղուանից պատմութեան մէջ և թէ այլ ձեռագրերում Ղունկիանոսը յաւելուածներ է արել և Ղազար Փարագեցու մէջ, ինչպէս յայտնում է մեզ այս մասին Մայր Աթոռիս բազմաշխատ միաբան ծ. Գալուստ Տէր Մկրտչեանը:

Խ. Վ.

ՄԱՏԵՆԱԼԽՍՈՒԹԻՒՆ.

ԱԴԻՆԱՅՑԻ ՆԱՄԱԿԻՆԵՐԸ. «Թագաւոր ի տանէ Դաւթիս. Պրով. ի. Հ. Խնդրայամի—Թարգմ: ուուսերէնից Յովհէփ Քահ. Տէր Պետրոսեանց. Թիֆլիս, 1897:—Այս գիրքն առանձին ուշագրութեան արժանի է այն պատճառաւ, որ նորա բովանդակութիւն կազմող նիւթը շատ քիչ է արծարծուում դժբաղդարար մեր գրականութեան մէջ և զիեթէ անմատչելի է հասարակութեան մի ստուար մասի համար: Քրիստոսի ժամանակակից մի Աղեքսանդրացի հարուստ հրէի երիտասարդ աղջիկ է ներկայացրած այստեղ՝ որ իւր ազգային—կրօնական կրթութիւնը կատարելագործելու համար Երուսաղէմ ուղարկուելով, նամակներ է գըրում այստեղից հօրը և յայտնում իւր տըպաւորութիւնները: Այսպէս վիպական, հետաքրլքելի, դիւրըմբռնելի ոճով մէջ է բերուած աւետարանի ամբողջ պատմութիւնը, որչափ մեզ հասած աղբիւները թոյլ են տալիս հեղինակին երեակայելու, թէ մի ժամանակակից լսած և ըմբռնած կարող էր լինել այն:—Ձեռքի տակ չունենալով այս զրբի ոչ անդդիերէն բնագիրն և ոչ ուուսերէն օրինակը մենք չենք կարող քննել թէ որչափ Ճգութեամբ է կատարուած Հայերէն թարգմանու-

թիւնը՝ այսքանը կարելի է ասել միայն, որ թեպէտ խորթ դարձուածները մութ խօսեր քիչ չեն պատահում՝ թարգմանութեան լեզուն սահուն է այնու ամենայնիւ և հեշտութեամբ է կարդացուում։ Մեզ զբաղեցնողն աւելի բռն զբուածքի արժանիքն ու թերութիւններն են։ — Ճանակ տարիներ առաջ «Քրիստոսի կեանք» անունով զբուածքներ յաճախ էին յայտնուում եւրոպական զբականութեան մէջ։ մի քանիսը նոցանից աւետարանի գերբնական բնաւորութիւնը մերժում են, սրամութիւններով և աղրիւների քննազատութեամբ ձեռք բերած փաստերով Փրկչական կեանքի հետ կապուած հրաշքները հերքել կամ իրրե բընական եղելութիւններ ցոյց տալ աշխատում ինչպէս օր. Ռինանի, Շտրառուսի, Կայմի զըրածները, որոնք ժամանակին շատ մտքեր են յուզել, հոչչակ և մնայուն պատմական նշանակութիւն ստացել միւնները ինչպէս օր. Վայսի, Բայցլադի, Փարրարի և այլ նման շարադրութիւններ, աշխատում են եղածը ինչպէս որ կայ պարզաբների պատմական հետազօտութիւններով ծցել և հաստատել և այդպէս մասնագէտների կամ հասարակութեան աւելի լայն շրջանների համար ուսումնասիրութեան առարկայ կամ հոգեոր շինութեան միջոց դարձնել։ Սակայն փորձը ցոյց առողջ շուտով, որ ամենահմուտ ուղղամիտ ջերմեռանդն և տաղանդաւոր գիտնականներին անգամ չի յաջողուում պատմական չափի ենթարկել աշխարհի Փրկչի կեանքը. կան կէտեր այդտեղ, որոնք իրենց երկնաւոր վսեմութիւնը, ուրեմն և ներքին ծշմարտութիւնը, կորցնում են, երբ հետաքրքիր մարդու ամեն ինչ տարրալուծող մատները դիպչում են նոցայ Պէտք էր ենթազրել, որ բանաստեղծի երկնաւթը երեւակայութիւնը աւելի յաջողութիւն կունենար այս գէպքում։ բայց դորա համար արտակարգ հանձար պէտք էր, զուգորդուած հարկաւ մաքուր և ջերմ հաւատի հետ, այն ևս ըստ մեզ, աւետարանի այս կամ այն զիծը միայն վերաբազրելու և ոչ նորա բոլոր խորհուրդները թափանցելու, Քրիստոսի կեանքի բոլոր մանրամասնութիւնները նկարագրելու համար։ «Աղինայի նամակներիւ հեղինակը այդպիսի արտակարգ հանձարի տէր անձն չէ և

նկարագրում է Քրիստոսի ամբողջ կեանքը. ուստի նորա զբուածքը գեղարուեստական տեսակետից շատ և շատ թոյլ կողմեր ունի և զգալի կերպով ետ է մնում օր. «Բեն-Հուր» անունը կրող զբքից, որ նոյնպէս Քրիստոսի ժամանակին վերաբերեալ մի վեպ է, շատ տարածուած և եւրոպական զանազան լեզուներով թարգմանուած, որի հեղինակը սակայն խոհեմութիւն է ունեցել հարեանցի մի ակնարկ միայն ձգելու Փրկչի վերայ, թէեւ այդ զբքի բովանդակութեան կեդրոնն ու առաջնորդող գաղափարը կրկին նորա յայտնութեան հետ կապ ունեցող հրաշալիքն են կազմում։ Ուստի այն տպաւորութիւնը, ինչ որ մենք ունեցել ենք «Բեն-Հուր»-ի այդ մասերը միայն կարգալիս, այսինքն որ հեղինակի զբիշը գէմ է ընկնում։ Նորա երեւակայութեան ազեղը ուժից վեր և անբնական կերպով է լարուում, երբ հանդէս պէտք է բերել Փրկին իւր չնաշխարհիկ անձնաւորութեամբ՝ ստանումնք այստեղ զբեթէ ամեն մի քայլափոխում։ Պէտք է ասել, որ այդ զբքի մէջ շատ կան նաև լաւ յաջողուած կտորներ. ամբողջն առ հասարակ թեթևութեամբ և հետաքրքրութեամբ է կարգացուում։ հեղինակի պարզ հաւատն ու անկեղծ ոգեւորութիւնը շատ արգելքների յաղթում են։ Բայց ինչպէս երեւում է նա մասնագիտօրէն չի ուսումնասիրել ու Գիրքը, կամ գոնէ չի կամեցել օգուտ քաղել արդի քննադատութեան արդիւնքներից։ Ըստ մեզ խոշոր սիալ էր նորա կողմից Յովհաննու աւետարանը իւր նկարագրութեանց մեծագոյն մասի համար իւրեւ հիմք ծառայեցնել, փոխանակ միւս աւետարանների։ ստուածաբան աւետարանց տեսական պատկերները կենդանի և շօշափելի կացուցանել նորանից շատ աւելի զօրեղին ևս գժուար կյաջողէր, իսկ գեղարուեստական կողմից ճաշակի պակասութիւն է ցոյց տալիս օրինակի համար, կարծում ենք, հրաշքների չափից աւելի կուտակումն՝ մանաւանդ այնպիսի հրաշքների, որպիսին է մեռեալին յարութիւն տալիք. երկու անգամ իւր հերոսուհուն յարութեան գէպքի ականատես դարձնելու ամենելին հարկ չկար, մի անգամն ևս բաւական էր նորան ամենամեծ հիացման մէջ գնելու համար։ — Բայց այսպիսի թերութիւններ գուցէ նոքա են

միայն նկատում, որոնք ամեն օր գործ ունին ս. Գլոբի հետ. մեծամասնութեան համար «Այդինայի նամակները» հետաքրքրական և խիստ օգտակար ընթերցանութեան նիւթ կարող են լինել:

Կ. Վ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆ

Եթէ մեր բոլոր պարբերական թերթերի մէջ՝ զէթ տասն օրուայ համարներում՝ ուշի ուշով կարդաք թարգմանուած հեռագիրները և կարդացածը համեմատէք ռուսերէն բնագրի հետ, որտեղից նոքա թարգմանուում են, դուք կը սարսափէք այն խրթին և խժական թարգմանութիւններից: Մինք համոզուած ենք, որ խմբագրութիւնները իրանց սուղ միջոցներից ոչինչ չեն ինսպիրում, որպէս զի աւելի յաջողակ թարգմանութիւններ ունենան, բայց չեն զտնում աւելի հմտութարգմանիչներ: Թիերևս առարկեն, թէ լաւ թարգմանչի համար հեռագիր փոխադրելը մանր գործ է. նա կը գերադասէ աւելի արդիւնաւոր աշխատութեամբ զբաղուիլ: Այն ժամանակ մի ակնարկ ձգենք վերջին տասը տարուայ մեր թարգմանական գրքերի վերայ, որոնցից առաւելագէս կազմուած է մեր զբականութիւնը. միթէ կարող էք երեք կամ երկու անուն տալ, որ նոքա այդ միջոցում հանդիսացած լինին որպէս զբականական արժէք ունեցող թարգմանիչներ: Եղան իսկ մեր ինքնուրոյն նշանաւոր հեղինակներն սկսել են, իրանց անարատ մաքուր լեզուի մէջ, խառնել

անհարազատ տարերք: Հենց նորերս, երբ մի պատկառելի վիպասանից հարցուցին, թէ ի՞նչպէս են տարածուում իւր վիպասանութիւնները, նա պատասխանեց. «Ոչինչ, լաւ» . . . բայց որքան զարմացած մնաց նա ի՞նքը, որ քաջ ռուսերէն խօսող ըլինելով հանդերձ՝ այդ ժամանակ „ունիչութեան ներքոյ է եղել նա ամենայն ազնուութեամբ խոստվանեց, թէ: «ոչինչ, լաւ» գարձուածը բնաւ հայերէն չէ և չի կարող նշանակել — «փառք Աստուծոյ, լաւ է ծախուում»: Ապա մտէք մեր զրագէտների շրջանը, խմբագրատունը կամ ռւսուցական խորհուրդը, էլ չենք առում հոգաբարձական ժողովը, և կէս ժամի չափ լսեցէք այն աեղի բարբառը: Դուք կը նկատէք մի զարմանալի երկոյթ. ամենից աւելի տկար հայկարանը՝ ամենից աւելի ազգեցութիւն է գործում մնացած խօսողների վերայ, և նոյն իսկ հայկարանների վերայ, այնպէս որ սոքա, յանգէտունուանից ներշնչուած, սկսում են «ոչինչ, լաւ» գարձուածքները իրանց հեղինակութեամբ սրբագործել, շարունակ գործ ածել և ուրիշներին էլ գործ ածել տալ Եթէ մեծ վիպասանը և լուսամիտ զրագէտները այսպէս են, ի՞նչ զարմանալի բան է, որ մեր աշակերտները ռուսերէն խօսելիս՝ հայերէն են մտածում և հայերէն խօսելիս ռուսերէն են մտածում. այսինքն երկու լեզուից ոչ մէկին տիրապետած չեն լինում:

Այս հոսանքը, որ գալիս է լրագրութիւնից, զբականութիւնից, հեղինակներից և գիտակ շրջաններից, ոչ մի ռւժով կարելի չէ գաղարեցնել. դա իբր տարերքների անդիմադրելի մրրիկ՝ պէտք է անցնի մեր նորարարողոջ լեզուի զլիսով իսկ ապա պէտք է տիւննենք, թէ իւր յետելից ինչ աւելուաններ է թողել: Միեր լեզուն տագնապի մէջ է, նա մի ինչ որ բնական փոփոխութեան է ենթարկվում: և միայն ժամանակը ցոյց կը տայ, թէ արդեօք նա որպէս փիւնիկ նորոնդ կը ծնուի, թէ օտարի ցնցոտիները հագին՝ խսպա, անդօր կը հանդիսանայ նոր մըտքերի արտայայտէ դառնալու համար: Այն անշուշտ միայն յիշեալ բնական յեղափոխութիւնը չէ, որ աղսպիսի աւելուաններ է գոր-